Պատասխաններ

Աշխարհագրություն առարկայի օլիմպիադայի հանրապետական փուլի – 2023-2024 ուս. տարի

9 – րդ դասարան

1. ա-ճիշտ; բ-ճիշտ; գ-սխալ; դ-սխալ; ե-սխալ; զ-սխալ; է-ճիշտ; ը-սխալ (**յուր.՝ 0.25միավոր**)

2. ա. Միջօրեականների և զուգահեռականների հատումից ստացվող ցանց (**0.5միավոր**):

բ. Որևէ երկրին պատկանող տարածք, որը տարածականապես բաժանված է մայր երկրի տարածքից և սահմանակից է այլ երկրների (**0.5միավոր**): Իմաստային սխալների դեպքում միավոր չի տրվում

3. Սան Մարինո

4. ա. ողողատ **բ.** բարխան: Ճիշտ համարել նաև դյուն պատասխանը

5. ա. 1) 2000 000հա x 5% : 100% = 100 000հա – բազմամյա տնկարկների մակերեսը (**0.25միավոր**): Եթե աշակերտը չի հասկացել, որ խաղողը աճեցվում է բազմամյա տնկարկների տարածքում, հետագա լուծումից անկախ տրվում է 0 միավոր

2) 100 000հա x 50% : 100% = 50 000հա – խաղողի այգիների զբաղեցրած տարածություն (**0.25միավոր**)

3) 50 000հա x 10տ/հա = 500 000տ բերք (**0.5 միավոր**)

Եթե վերջին գործողությունում առկա է միայն հաշվարկային սխալ, սակայն բաղադրիչները ճիշտ են՝ **տրվում է 0.75միավոր**: Եթե պատասխանը ևս ճիշտ է՝ **1միավոր**:

բ. 1) ցամաքային ուղիների երկարությունը՝ 30 000կմ + 10 000կմ + 20 000կմ = 60 000կմ (**0.25միավոր**) Եթե աշակերտը չի հասկացել, որոնք են ցամաքային տրանսպորտի տեսակները, հետագա լուծումից անկախ տրվում է 0 միավոր

2) 60 000կմ/60 000կմ^2 = 1 կմ/կմ^2 (**ևս 0.75միավոր**)

Եթե վերջին գործողությունում առկա է միայն հաշվարկային սխալ, սակայն բաղադրիչները ճիշտ են՝ **տրվում է 0.75միավոր**: Եթե ամբողջը լիարժեք ճիշտ է՝ **1միավոր**:

6. Գծագիրը պետք է ունենա այսպիսի կամ նմանատիպ տեսք: Բովանդակային ցանկացած սխալի դեպքում գծագրի համար **միավոր չի տրվում**: Զուտ տեխնիկական թերացումների պարագայում կարող է տրվել առավելագույնը **0.5միավոր:**



ա. Աֆրիկայում (**1միավոր**) Եթե նշվել է Ասիա տարբերակը, բ ենթահարցը չի ստուգվում:

բ. Որպես հիմնական պատճառներ կարելի է նշել տարածաշրջանի երկրների մեծ մասի թույլ զարգացվածությունը, որի պայմաններում գերակշռում է գյուղատնտեսությունը և դրանում ձեռքի աշխատանքը, ինչով պայմանավորված՝ շատ երեխաներ ունենալու ցանկությունը որպես օգնող ուժ, ինչպես նաև կանանց ցածր ներգրավվածությունը տնտեսական և քաղաքական կյանքում, վաղ ամուսնությունները, ցածր կրթական մակարդակը, ցածր ուրբանիզացման մակարդակը, ընտանիքի պլանավորման ինստիտուտի թերզարգացվածությունը, ավանդույթները, բարձր մանկամահացությունը, որը հանգեցնում է երեխաների հնարավոր կորուստը նոր երեխաներով լրացնելու ցանկության (**յուր.՝ 0.25միավոր**): Առողջապահության զարգացում, ապագաղութացում պատասխանները չեն դիտարկվում

որպես ճիշտ, քանի որ 70 տարվա կտրվածքով չեն կարող էական ազդեցություն ունենալ նշված միտումների վրա: Պարզապես կրոն պատասխանի համար ևս միավոր չի տրվում

7. Տավուշ, Շիրակ, Արարատ, Սյունիք

Իր դիրքում ճիշտ նշված յուրաքանչյուր պատասխանի համար տրվում է **0.25միավոր**

8. ա. Ամենաչոր եղանակը ձմեռն է **(0.5միավոր)**: Այդ եղանակին տիրապետող են արկտիկական և բարեխառն օդային զանգվածները **(0.5միավոր)**: Աշակերտը կարող է նշել նաև սիբիրյան անտիցիկլոնը:

բ. Միտումներից կարելի է նշել սառցապատման մակերեսի փոքրանալը, տարվա ընթացքում սառցապատման ավելի կարճ տևողությունը կամ սառցի շերտի հաստության կրճատումը (**երկու ճիշտ պատասխանի դեպքում՝ 0.5միավոր**): Ծովային տրանսպորտի տեսանկյունից դրական ազդեցություններն են. Հյուսիսային սառուցյալ օվկիանոսում ծովային փոխադրումների տևողության աճը, փոխադրումների ինտենսիվացումը, առանց սառցահատների ուղեկցության փոխադրումների ավելացումը, ինչը ազդում է նաև փոխադրվող բեռների գնի վրա: Բացասական ազդեցություններից է՝ ջրի մակարդակի աճի արդյունքում նավահանգիստների ջրածածկումը կամ ենթակառուցվածքների վնասումը և օվկիանոսային ավելի բարձր ալիքների ձևավորումը (**երկու ճիշտ պատասխանի դեպքում՝ 0.5միավոր**): Այլ՝ երկրորդական պատճառի ներկայացման կամ բացատրության թերությունների դեպքում՝ առավելագույնը 0.5 միավոր:

9. ա. Չինաստանում (**0.5միավոր**): 1960-ական թթ. (**0.5միավոր**)

բ. Հարավային Կորեա (**0.5միավոր**):

գ. Ճապոնիայում (**0.25 միավոր**), 1970-ական թթ. (**0.25 միավոր**)

10. ա. 1950-ականներին (**0.5միավոր**); պատճառը, արդյունաբերականացման բարձր տեմպերով պայմանավորված, քաղաքային բնակչության թվի աճն ու նրանց բնակարաններով ապահովելու պահանջարկն էր, ինչի արդյունքում սկսվեց բազմահարկ և բազմաբնակարան շենքերի ակտիվ շինարարությունը (**0.5միավոր**):

բ. Քանի որ Սուրբ Լավրենտիոսի գետաբերանում մակընթացային ուժեղ ալիքներ են լինում, օվկիանոսային աղի ջուրը անարգել ներխուժում է գետի հունով դեպի վեր և առաջացնում է նշված երևույթը (**0.5միավոր**):

11. Ա-4; Բ-3; Գ-8; Դ-7; Ե-2; Զ-6; Է-9; Ը-5 (**յուր. 0.25միավոր**)